— Դուք, պարոն, եղե՞լ էք միսիոնարների երկրում:

— Եղել եմ, — ասաց Ջալլադը եւ կրկին դարձաւ դէպի միսիոնարների առաջին աշակերտը.

— Ինչպէ՞ս կարելի է այդ աստիճան միակողմանի, սահմանափակ եւ մոլեռանդ լինել: Դուք հերքում էք ազգը, հայրենիքը, հասարակական բարորութիւնը, դուք հերքում էք մարդու ինքնագործունէութիւնը, որի վրայ է հիմնուած նրա երջանկութիւնը, եւ միմիայն վերացական, հոգեւոր սնունդով էք մտածում կերակրել մարդուկներին: Այդ նրանից է, որ ձեզ, բացի սուրբ գրքերի սքոլաստիկայից, ուրիշ ոչինչ չեն սովորեցրել: Դուք չգիտէք, որ միսիոնարի քարոզած բողոքականութիւնը բոլորովին այլ ոգի, այլ ուղղութիւն եւ այլ ձգտում ունի, քան թէ այն բողոքականութիւնը, որ արդէն ընդհանրացել եւ կազմակերպել է մի բողոքական ժողովրդի մէջ, թէ՛ Եւրոպայում լինէր նա, թէ՛ Ամերիկայում: Դուք չգիտէք, որ միսիոնարին հարկաւոր են հաւատացեալներ միայն. նա կազմում է իր եկեղեցին, հոգ է տանում նրա հոգեւոր պէտքերի մասին, իսկ նրա աշխարհային պէտքերը զանց է առնում: Եւ ստիպուած է զանց առնել, որովհետեւ այդ վերջինը կը թուլացնէր առաջինի ազդեցութիւնը: Նա պէտք է աշխատէ կտրատել ձեր բոլոր հին կապերը, որ կապում են ձեր անցեալի, ձեր պատմութեան, մի խօսքով, ձեր ազգային կեանքի հետ, որպէսզի, առանձնացնելով ձեզ, կարողանայ կենտրոնացնել իր նոր հիմնած եկեղեցում: Այդ պահանջում է միսիոնարի կոչումը, նրա պաշտօնը, որին նա արհեստի ձեւ է տոել: Բայց նոյն միսիոնարը իր հայրենիքում այդպէս չէ վարւում. նա սիրում է իր ազգը, նրա պատմութիւնը, նրա բանաստեղծութիւնը եւ նրա մինչեւ անգամ հեթանոսական դարերի աւանդութիւններն ու առասպելները: Նա մասնակցում է եւ իր հայրենիքի հասարակական գործերի մէջ. մտածում է, թէ ինչո՞ւ մէկը հարուստ է, միւսը աղքատ է. աշխատում է, որ աղքատն էլ իր տանը ուտելու հաց ունենայ եւ գոհ լինի իր վիճակից: Բայց ի՞նչ տոեց ձեզ այդ նոր կրօնը: Նա սերմանեց ձեր մէջ երկպառակութիւն, ատելութիւն դէպի ձեր այլադաւան ազգայինները: Դուք նրանց «հեթանոսներ» էք կոչում, նրանք ձեզ՝ «անհաւատներ»: Դուք աւելի բարւոք էք համարում թուրքին, քուրդին մօտենալ, քան թէ նրանց: Այ՞դ է աւետարանական եղբայրութիւնը:

Ինչպէս երեւում էր, Ջալլադի այդ երկար ճառից միսիոնարների առաջին աշակերտի գլուխը ոչինչ չմտաւ: Նա դարձեալ բաց արեց իր օրացոյցի չափ ծոցի աւետարանը եւ նրանում ինչ-որ կարդաց: Ջալլադը զայրացաւ:

— Դուք վնասակար մոլեռանդներ էք, եւ աւելի ոչինչ, — ասաց նա փոքրինչ զգացուած ձայնով: — Այդ աստուածային գրքի թիւր ու սխալ մեկնութիւն-